



**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ԲԱԺՆԻ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմադրամում (այսուհետ՝ Ինստիտուտ) ներքին աուդիտի իրականացման (կազմակերպման) կարգը, Ներքին աուդիտի բաժնի լիազորությունները, Ներքին աուդիտի բաժնի ղեկավարի և աուդիտորների իրավունքներն ու պարտականությունները:

2. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- 2.1. Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ստանդարտների, ներքին աուդիտորների վարքագծի կանոնների և հետևյալ սկզբունքների համաձայն՝
- 1) անկախություն,
 - 2) օբյեկտիվություն,
 - 3) կարողունակություն,
 - 4) անկողմնակալություն,
 - 5) գաղտնիություն:

3. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

- 3.1. Ինստիտուտում ներքին աուդիտն իրականացվում է Ներքին աուդիտի բաժնի կողմից:
- 3.2. Ներքին աուդիտի բաժինը հանդիսանում է Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում, որն աշխատում է բաժնի ղեկավարի անմիջական ղեկավարությամբ և հաշվետու է Ինստիտուտի ղեկավարին:

- 3.3. Ներքին աուդիտի բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, Ինստիտուտի կանոնադրությամբ, Ինստիտուտի Հոգաբարձուների խորհրդի, Գիտական խորհրդի որոշումներով, Ինստիտուտի ռեկտորի կողմից ընդունված ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով:
- 3.4. Ներքին աուդիտի բաժնի կառուցվածքը սահմանվում է Ինստիտուտի հաստիքացուցակով:
- 3.5. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը և աուդիտորները, բացի ներքին աուդիտին առնչվող աշխատանքներից, Ինստիտուտում այլ գործառույթներ և աշխատանքներ իրականացնելու իրավունք չունեն:
- 3.6. Ներքին աուդիտի իրականացմանն աջակցում է Ինստիտուտի ռեկտորը, ով հանդիսանում է Ինստիտուտի ֆինանսների կառավարման պատասխանատուն:
- 3.7. Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ստանդարտների համաձայն՝ բավարար տեղեկությունների բացահայտման, վերլուծության, գնահատման և փաստաթղթային ամրագրման հիման վրա խնդիրների նկատմամբ կարծիքի ձևավորմամբ:
- 3.8. Ներքին աուդիտի ստորաբաժանմանը հասանելի են Ինստիտուտի գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը՝ ըստ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի և բոլոր գրառումները՝ այդ թվում՝ էլեկտրոնային, որոնք անհրաժեշտ են աուդիտի իրականացման համար:
- 3.9. Ինստիտուտի ռեկտորը և կառուցվածքային մյուս ստորաբաժանումների ղեկավարները պարտավոր են համագործակցել Ներքին աուդիտի բաժնի ղեկավարի հետ և իրավունք չունեն չբացահայտելու Ինստիտուտին վերաբերելի տեղեկությունները կամ մերժելու դրանց տրամադրումը:

4. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. *Ներքին աուդիտի բաժնի ղեկավարն ու աուդիտորներն իրավունք ունեն.*
 - 4.1.1. համագործակցել և աջակցություն ստանալ այն ստորաբաժանման ղեկավարներից և աշխատակիցներից, որտեղ իրականացվում է աուդիտը,

- 4.1.2. պատասխանատու աշխատակիցներից պահանջելու աուդիտի համար անհրաժեշտ որևէ տվյալ,
- 4.1.3. գեկուցել ռեկտորին աուդիտի իրականացման խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ,
- 4.1.4. առաջարկել ռեկտորին՝ նշանակել փորձագետ, եթե ներքին աուդիտի իրականացման համար պահանջվում են հատուկ գիտելիքներ ու հմտություններ,
- 4.1.5. մասնակցել տարբեր խորհրդակցությունների:
- 4.2. *Ներքին աուդիտի բաժնի ղեկավարն ու աուդիտորները պարտավոր են.*
- 4.2.1. հետևել ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին, ներքին աուդիտի կանոնակարգին,
- 4.2.2. չիրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
- 4.2.3. գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների և կատարել աշխատանքներ, որոնք վարկաբեկում են ներքին աուդիտորի մասնագիտությունը և հնստիտուտը,
- 4.2.4. պատրաստել և ռեկտորին ներկայացնել ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը, ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը,
- 4.2.5. կազմել և ռեկտորին ներկայացնել Ներքին աուդիտի բաժնի տարեկան հաշվետվությունը, այդ թվում հաշվետվություն աուդիտի արդյունքների, արձանագրված խնդիրների, արված առաջարկությունների և հնստիտուտի գործունեությունը բարելավելու նպատակով ձեռնարկված գործողությունների մասին,
- 4.2.6. իրականացնել աշխատանքի ճիշտ բաշխում Ներքին աուդիտի բաժնի աշխատակիցների միջև,
- 4.2.7. հետևել ներքին աուդիտի տարեկան ծրագրի կատարմանը:

5. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը պատասխանատու է Ներքին աուդիտի բաժնի ընդհանուր գործունեության համար:

- 5.2. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը և աուդիտորները պարտավոր են գործել ՀՀ օրենսդրությամբ և Ինստիտուտի ներքին իրավական ակտերով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և պատասխանատու են իրենց պարտականությունների և իրենց վրա դրված գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:
- 5.3. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը և աուդիտորները Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու, ինչպես նաև Ինստիտուտում սահմանված կարգապահական կանոնները, պաշտոնեական պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.4. Ներքին աուդիտի բաժնի ղեկավարը և աուդիտորները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը: Դրանք հրապարակելու դեպքում նրանք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 5.5. Ինստիտուտի ղեկավարը կարող է Ներքին աուդիտի բաժնի ղեկավարին և աուդիտորներին հանձնարարել սույն կանոնակարգի 3-րդ գլխով չնախատեսված, սակայն Ինստիտուտի գործառույթների կատարմանն առնչվող այլ խնդիրներ:

6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 6.1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից: